



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



«ԵՒ ՇԻՆՈՂԱՅ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՒ ՍՈՐԻՆ ԵՆ  
ՀԱՆԳՈՒՑԵԱԼ...»

### ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՏԱՐԵՑ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՅ ՀԻՄՆՕՐՀՆԷՔ

Լաւս Վեկասի մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ականտես վկան եղաւ Արեւմտեան մեր Թեմի եկեղեցաշինութեան ծիրին մէջ նորագոյն աշխատանքներուն, որ այլապէս վկայութիւն է Թեմի գործունեութեան կենսունակութեան եւ հաստատ քայլերով տարածման:

Վեհափառ Հայրապետը անձնական օղանաւով մը Լաւս Վեկաս հասաւ Չորեքշաբթի, 19 Հոկտեմբերի յետմիջօրէին ու ծխական շրջանին հետ եղաւ մինչեւ Ուրբաթ, 21 Հոկտեմբերի առաւօտը: Նորին Ս. Օծութեան կ'ընկերանային Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, միաբան հայրեր եւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ: Չորեքշաբթի երեկոյեան ու Հինգշաբթի առաւօտուն, շքախումբին միացան Թեմիս Ազգ. Վարչութեան անդամներ:

Ժամանման պահուն, Հայրապետական շքախումբը դիմաւորուեցաւ եւ հիւրընկալուեցաւ ծխական շրջանի հոգեւոր հովիւին, ծխական յանձնախումբին եւ Հայրապետի Լաւս Վեկաս այցելութեան գլխաւոր հիւրընկալ Տեր եւ Տիկին Ալեքս եւ Արտա Եմենիճեան բարերար ամուլին կողմէ, որ երեկոյեան կազմակերպած էր մտերմիկ ընթրիք մը: Արձանագրուեցան ողջոյնի արտայայտութիւններ: Վեհափառ Հայրապետը յատուկ գնահատանքով խօսեցաւ հիւրընկալ ամուլին մասին ու դրուատեց Տիկին Արտա Եմենիճեանի մօր՝ Վերժին Գունազեանի եկեղեցանուէր ու ազգանուէր ծառայութիւնները: Ան եղած է Լաւս Վեկասի Կիրակնօրեայ դպրոցի հիմնադիրը:

Հինգշաբթի կեսօրին, Ս. Կարապետ եկեղեցւոյ Ծխական Յանձնախումբը Վեհափառ Հայրապետն ու ընկերակիցները հիւրընկալեց ճաշով: Ներկայ էին շրջանի Հ.Յ.Դ. «Իշխան» կոմիտէին, հայկական միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչները: Բոլորին ակնարկները ուղղուած էին յետմիջօրէի ժամերուն, երբ տեղի պիտի ունենար կառուցման ընթացքի մէջ եղող եկեղեցւոյ օրհնութիւնը:

Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՅ ՀԻՄՆՕՐՀՆԷՔ

Արդարեւ, ծխական համայնքին ծանօթանալու եւ անոր իր պատգամը ուղղելու կողքին, Վեհափառ Հայրապետին Լաս Վեկաս այցելութեան գլխաւոր նպատակն էր կատարել քաղաքի Ս. Կարապետ եկեղեցւոյ հիմնօրհները:

Առաջնորդ Սրբազանին, միաբան հայրերու, ժողովականութեան ներկայացուցիչներու հետ, Վեհափառ Հայրապետը Ս. Կարապետ եկեղեցւոյ համալիրը ժամանեց յետմիջօրեի ժամը 4ին: Սպասման մէջ էին ծխական համայնքի պատասխանատուները, ներկայացուցչական դէմքեր ու բազմաթիւ ազգայիններ, որոնք շարիքն՝ եկեղեցւոյ բարերար Տիար Լերի Պարնզ, Բլարք գաւառի պատասխանատուներէն Տիկին Զրիս Կուինչիլիանի, ներկայացուցիչներ առաքած էին Նեւատայի նահանգապետ Պրայըն Սանտովանի, ծերակուտականներ Հերի Ռիտ, Տին Հելըր եւ խորհրդարանականներ Շելի Պըրըլի ու Տոքթ. ժո Հէք. վերջինները ողջոյին գիրեր ներկայացուցին Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը կատարեց աղ ու հացի օրհնութիւնը եւ «Հրաշափառ»ով մուտք գործեց եկեղեցի: ՀՕՄի շաբաթօրեայ դպրոցի աշակերտները գեղարուեստական յայտագիր մը հրամցուցին հայրապետական շքախումբին ու շուրջ 300 ներկաներուն:

Այնուհետեւ, տեղի ունեցաւ հիմարկէքի արարողութիւնը, հանդիսապետութեամբ եւ ձեռամբ Վեհափառ Հայրապետին, որ օծեց եկեղեցւոյ գմբէթի ու խորանի խաչերը, իսկ Առաջնորդ Սրբազանը կատարեց 16 սիւներուն օծումը. սիւները կը խորհրդանշեն Զրիստոսի 12 առաքեալները, 4 աւետարանիչները եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, իբրեւ հիմեր՝ մեր եկեղեցւոյ:

Արարողութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը շնորհաւորեց Լաս Վեկասի մեր գաղութը՝ այս կարելոր իրագործումին համար, կարելորեց հաւաքական հաւատքով, յոյսով ու սիրով գործելու ընթացքը եւ մաղթեց, որ եկեղեցւոյ շինարարութիւնը իր լրումին հասնի յառաջիկայ տարի:

Վեհափառ Հայրապետը վեր առաւ եկեղեցի կառուցելու նշանակութիւնը եւ շեշտեց, որ «մեր եկեղեցին կը պատկանի ժողովուրդին, ժողովուրդն է մեր եկեղեցին: Լաս Վեկասի Ս. Կարապետ եկեղեցին եւս պիտի ըլլայ մեր ժողովուրդի եկեղեցին ու պիտի ծառայէ անխտիր բոլորին»:

Առաջնորդ Սրբազանը երախտագիտութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին, հովուապետական իր այս այցելութեան, ու մասնաւորաբար եկեղեցւոյ հիմնարկէքը կատարելու համար, եւ խոստացաւ, որ մեր նպատակները պիտի իրագործենք յանձնառու հաւատքով, տեսլապաշտ յոյսով եւ նախապայման չճանչցող սիրով:

Տեղի ունեցաւ աջահամբոյր: Վեհափառ Հայրապետը ապա այցելեց համալիրին բաժանմունքները, գնահատեց այս իրագործման համար Հովիւին, Ծխական Յանձնախումբին, Տիկնանց Միութեան ու բոլոր գործակիցներուն նուիրումը:

Ինչպէս ծանօթ է, ծխական համայնքը մօտաւորապէս երկու տարի առաջ իրականացման ճամբու մէջ դրած էր սեփական եկեղեցի ունենալու երազը եւ բարերար Լերի Պարնզի իշխանական նուիրատուութեան շնորհիւ, ձեռք բերած էր այս կալուածը: Այնուհետեւ, իրականացման ճամբու մէջ

մտաւ շէնքի բարեփոխման աշխատանքը: Առաջին հերթին, կառուցուեցաւ սրահը, որ առժամաբար կը գործածուի իբրեւ աղօթատեղի, սպասելով կողքի եկեղեցւոյ շինութեան աշխատանքներուն լրումին: Զիմա, երբ նախնական բոլոր աշխատանքները կատարուած են, Ս. Կարապետ եկեղեցին կը ստանայ Վեհափառ Զայրապետին օրհնութիւնը: Եկեղեցին ու կողքի սրահը պիտի դառնան աղօթքի ու մշակոյթի կեդրոն:

Նշենք, որ բարերար Լէրի Պարնզ այս եկեղեցւոյ ծրագիրը որդեգրած էր ի յիշատակ իր հանգուցեալ Տիկնոջ՝ Սեդա Տէր Կարապետեան-Պարնզի ու անոր նահատակ նախնիներուն, որոնք զոհ գացած են Ցեղասպանութեան: Զետեւաբար, Վեհափառին օրհնութիւնը ստացող եկեղեցին այլապէս յուշարձան մըն է մեր նահատակներուն:

Յիշեցնենք, որ իր այժմու հովուապետական այցելութեան նախընթաց մէկ հանգրուանին, Չորեքշաբթի, 12 Յոկտեմբերին, Վեհափառ Զայրապետը կատարեց Ազգ. Վահան եւ Անուշ Վարժարանի մարգարանին հիմնաքարի օրհնութիւնը: Իսկ հովուապետական 2005ի այցելութեան, Նորին Ս. Օծութիւնը կատարած էր Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքին օրհնութիւնը, ինչպէս նաեւ Փասատինայի Ս. Սարգիս նորակառոյց եկեղեցւոյ օծումը:

## ՄԵԾԱՐԱՆՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Լաւ Վեկասի ծխական համայնքը ի պատիւ Վեհափառ Զայրապետին կազմակերպած էր նաեւ մեծարանքի ճաշկերոյթ մը, որ տեղի ունեցաւ նոյն օրը, երեկոյեան, քաղաքի «Թրոփիքանա» պանդոկին մէջ, հիւրընկալութեամբ Տէր եւ Տիկին Ալեքս եւ Արտա Եմենիճեան բարերար ամուլին:

Վեհափառ Զայրապետին ու շքախումբին կողքին, ներկայ էին ծխական համայնքի կազմակերպութիւններէն ու միութիւններէն ներկայացուցչական դէմքերը, ինչպէս նաեւ յատկապէս այս առիթով տարբեր քաղաքներէ ժանանած ազգայիններ, ընդամենը շուրջ 350 հանդիսականներ:

Տիար Ալեքս Եմենիճեան ողջունեց Վեհափառ Զայրապետը, հիւրերն ու ներկաները, այս այցելութիւնն ու տեղի ունեցած արարողութիւնը որակելով պատմական: Ան յայտնեց, թէ օրհնուած կը զգայ իր պանդոկին մէջ, ու շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ Առաջնորդ Սրբազանին, իր հոգածու վերաբերմունքին համար:

Ծխական Յանձնախումբի ատենապետ Տիար Ատրուշան Արմենեան արտասանեց ողջոյնի ու երախտագիտութեան խօսք: Պատասխանեց նաեւ Ազգ. Վարչութեան անդամներէն Տիար Վահան Պզտիկեան, որ յանուն Ազգ. Վարչութեան, շնորհակալութեան խօսք ուղղեց Վեհափառ Զայրապետին ու անդրադարձաւ Լաւ Վեկասի ծխական համայնքի երթին:

Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, որ կազմուած էր պարերով ու ասմունքով:

Գոհունակութեան խօսք արտասանեց նաեւ Առաջնորդ Սրբազանը, որ գնահատեց եկեղեցւոյ բարերարին նուիրումն ու յանուն Վեհափառ

Հայրապետին՝ յուշանուէր մը յանձնեց անոր: Առաջնորդ Սրբազանը դրուատիքով արտայայտուեցաւ նաեւ Ս. Կարապետ եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, ծխական յանձնախումբին մասին, եւ ձեռաց խաչ մը նուիրեց եկեղեցւոյ համար:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկայութիւնը բոլոր ներկաներուն, մասնաւորաբար Լուս Անճելըսէն, Արիզոնայէն, Նիւ Ճըրզիէն ու Շիքակոյէն ժամանած ազգայիններուն. ան յիշեցուց, որ հովուապետական այս այցելութեան նշանաբանն է «Հաւատքով կը կերտենք», եւ համոզում յայտնեց, որ մեր աշխատանքի մարզերուն մէջ հաւատքը պիտի ըլլայ աղբիւրը մեր բոլոր իրագործումներուն. «Հաւատքով պիտի ապրինք հոգեկան վերանորոգում, հաւատքով պիտի ծաղկեցնենք մեր դպրոցները, հաւատքով պիտի շարունակենք մեր արդար իրաւութիւններուն հետապնդումը», յայտարարեց Առաջնորդ Սրբազանը, եւ հրաւիրեց Վեհափառ Հայրապետը, որպէսզի ուղղէ իր պատգամը:

Անգամ մը եւս ողջունելով Լաս Վեկասի հայութիւնը, ծխական շրջանի նուիրեալներն ու հիւրերը, Նորին Ս. Օծութիւնը հաստատեց, թէ համայնքի մը կերտումն ու աշխատունակութիւնը կախեալ են հաւաքական կեանքի կազմակերպումէն, որ երաշխիք է յաջող իրագործումներու: Ան յորդորեց հաւատքով ու աննկուն կամքով ամրապնդել հաւաքական իրագործումներու ուղին եւ իր խօսքը եզրափակեց գնահատանք արձանագրելով հիւրընկալներուն, Ազգ. Վարչութեան ու բարերարներուն:

## **HIS HOLINESS CATHOLICOS ARAM I BLESSES THE FOUNDATION OF ST. GARABED CHURCH OF LAS VEGAS**

On Wednesday, October 19, 2011, His Holiness Catholicos Aram I, accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Clergy and Councils members, arrived in Las Vegas where over the next two days the Pontiff met with community members and blessed the foundation of St. Garabed Church.

Upon their arrival, His Holiness and entourage were welcomed by Parish Pastor Archpriest Fr. Avedis Torossian, Parish Council members, and Las Vegas Pontifical Visit main sponsors Mr. and Mrs. Alex and Arda Yemenidjian, who also hosted His Holiness to a dinner that evening. During the dinner, His Holiness spoke with high regards of the Yemenidjian family, and of the dedicated service of Mrs. Yemenidjian's mother Verjine Koujakian who was one of the founders of the Las Vegas Church Sunday School.

On the afternoon of Thursday, October 20, His Holiness was hosted to lunch by the Parish Council, with the participation of representatives from the ARF "Ishkhan" Gomideh and sister organizations.

Late afternoon, His Holiness and entourage arrived at the St. Garabed Church and Community Center complex, where over 300 community members were gathered, enthusiastically awaiting the arrival of the Pontiff for the groundbreaking and blessing of the Church foundation. Church benefactor Mr.

Larry Barnes participated in the service, as did Clark County Commissioner Chris Giunchigliani. Representatives from the offices of Governor Brian Sandoval, Senator Harry Reid, Senator Dean Heller, Congresswoman Shelley Berkley, and Congressman Dr. Joe Heck were also present.

With the "Hrashapar" hymn, His Holiness entered the complex and conducted the traditional blessing of salt and bread, after which ARS Saturday School students presented a cultural program.

Thus began the blessing of the foundation ceremony.

His Holiness consecrated the Church dome and altar crosses, and the Prelate consecrated the 16 pillars, which represent the 12 apostles, the four Gospel writers, and St. Gregory the Illuminator, the foundations of our Church.

Following the groundbreaking and blessing, His Holiness congratulated the Parish community on their great achievement, conveyed the importance of working together with faith, hope, and love, and expressed his wish that the project reach its successful completion in the near future. Speaking on what it means to build a church, His Holiness stated that our church belongs to our people, the people are our church, and St. Garabed Church of Las Vegas will also be the people's church and will serve all indiscriminately.

The Prelate expressed gratitude to His Holiness for his Pontifical visit to the Las Vegas community and pledged that all will work towards of their mission with unwavering faith, hope, and love.

"Achahampouyr" followed, during which faithful received the blessings of the Pontiff, after which His Holiness toured the complex, expressing his contentment at the project and commending the service of the Parish Priest, Parish Council, Ladies Auxiliary, and all volunteers.

The Parish community set in motion their dream of having their own church nearly two years ago, when by the generosity of benefactor Larry Barnes, the current site was purchased. The benefaction of Mr. Barnes was in memory of his wife Seda Der Garabedian-Barnes, and her ancestors who had perished in the Genocide. The remodeling phase began soon after, with first the completion of the hall, where services are currently held. The second phase is the construction of the Church, which will now proceed with the blessings of His Holiness. Once the project is completed, the complex will serve as the spiritual and cultural hub of the Las Vegas Armenian community.

In the evening, a banquet was held in honor of His Holiness at the Tropicana Hotel, hosted by Mr. and Mrs. Alex and Arda Yemenidjian. Over 350 guests from different states had gathered to honor His Holiness.

Mr. Yemenidjian welcomed His Holiness, expressing his thanks for what he called a historic day.

Parish Council Chair Mr. Adroushan Armenian expressed thanks and gratitude to His Holiness for blessing the Las Vegas community with his Pontifical visit. He then spoke of the history of St. Garabed Church and the stages that have led them to where they are today. Addressing benefactor Mr. Larry Barnes, Mr. Armenian said, "The Las Vegas Armenian community and all Armenians around the world are grateful for your generous donations that motivated us to undertake this important project."

On behalf of the Executive Council, Mr. Vahan Bezdikian welcomed His Holiness and expressed gratitude for the day. He noted how the Las Vegas Armenian community has a decades-long history but it was just in the last few years that they experienced a revival, which is evidenced by the Church project currently underway. He commended the Parish Council and affiliated bodies for their dedication, and thanked the Yemenidjian family for hosting the visit.

The banquet included a cultural program of dances and recitations.

The Prelate expressed his appreciation and commended Mr. and Mrs. Yemenidjian for their commitment and service to our Church, and on behalf of His Holiness presented them with a memento. The Prelate also commended the Parish Priest and Council, and presented a hand cross to the Church.

The Prelate joyfully welcomed the presence of faithful from Los Angeles, Arizona, New Jersey, and Chicago. He reminded the guests that the theme of the Pontifical Visit is "With faith we build", and stressed that with faith we will have spiritual renewal, with faith we will serve for the continued progress of our schools, and with faith we will continue to fight for the Armenian Cause. He then invited His Holiness to deliver his message.

His Holiness once again greeted the Parish community and all those who had journeyed to be a part of the historic day. He affirmed that the establishment and livelihood of a community depends on collective efforts, which is what leads to successful realization of endeavors. The Pontiff urged all to serve for the collective good with unwavering faith and strong determination, and concluded by once again commending the hosts, Executive Council, sponsors and supporters.